ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 53	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Քաղվածք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	21.12.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	21.12.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ՀՀ-ՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

21 դեկտեմբերի 2017 թվականի N 53

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրին՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Կ. Կարապետյան

2017 թ. դեկտեմբերի 21
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	**Միջոցառման նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքը**	**Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը (միջոցառման արդյունավետության ստուգման չափանիշը)**	**Պատասխանատու կատարողները և համակատարողները**	**Կատարման ժամկետը**	**Ֆինանսավորման չափը (մլն դրամ)**	**Ֆինանսավորման աղբյուրը**
1. Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացման ծրագրի իրականացում	Ռուսաստանի Դաշնության հայտնի սերմարտադրող կազմակերպություններից աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի և սիսեռի էլիտային վերարտադրության բարձր բերքատու և հարմարվողականության ցուցանիշներ ունեցող սորտերի սերմնանյութի ներկրում: Հատկացված սերմնանյութով սերմնաբուծական կազմակերպությունների կողմից սերմնադաշտերի հիմնում: Սերմնադաշտերից ստացված մաքուր սերմնանյութի շուրջ 70%-ի իրացում մարզերի ֆերմերային տնտեսություններին:	Հայաստանի Հանրապետությունում սերմնաբուծական կազմակերպությունների արտադրական կարողությունների հզորացում, հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի սերմնանյութի արտադրական ծավալների ավելացում և տեղական արտադրության սերմնանյութով ինքնաբավության մակարդակի բարձրացում, այդ մշակաբույսերի սորտային կազմի հարստացում, մշակության արդյունավետության բարձրացում և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում	Աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի տեղական արտադրության սերմնանյութի քանակների ավելացում 80 տոննայով, որը բավարար է 375 հա սերմադաշտի համար:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018-2019 թթ.	117.8	ՀՀ պետական բյուջե

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը (միջոցառման արդյունավետության ստուգման չափանիշը)	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը (մլն դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
2.Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման մեխանիզմների վերանայում՝ վարկի գումարի, տոկոսադրույքի, դրա սուբսիդավորվող մասի, մարման ժամկետների, նախապայմանների մասով, նպատակ ունենալով շահառուների ուսուցումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, տնտեսությունների խոշորացումը, վարկառուների ռեեստրի վարումը	Գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ստեղծում, արտադրության ինտենսիվացման մակարդակի բարձրացում, տնտեսությունների խոշորացում, արտադրության արդյունավետության բարձրացում, վարկառուների ռեեստրի վարման և դրա տվյալների վերլուծության միջոցով վարկավորման առաջնահերթ խնդիրների բացահայտում, արդյունքում վարկավորման նախընտրելի ուղղությունների և մեխանիզմների առաջադրում: Ծրագրի շրջանակներում վարկերը սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների տնտեսավարողներին և գյուղատնտեսական կոոպերատիվներին կտրամադրվեն 3 %, իսկ այլ համայնքների տնտեսավարողներին՝ 5% տոկոսադրույքով:	Տոկոսադրույքի սուբսիդավորմամբ տրամադրված վարկերի սուբսիդավորման գումար (2017 թ-ին՝ 907.7 մլն դրամ, հետագա տարիներին՝ տարեկան 2030.9 մլն դրամ}	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017թ. III եռ.-2021 թթ.	2017թ-ին՝ 907.7, հետագա տարիներին՝ տարեկան 2030.9	ՀՀ պետական բյուջե
3. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի	Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով՝ ֆինանսական վարձակալությամբ՝ լիզինգով մինչև 9% տոկոսադրույքով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարում՝ տոկոսադրույքի 7 տոկոսային կետի սուբսիդավորմամբ	Կստեղծվեն նախադրյալներ մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ վճարունակ պահանջարկի բավարարման՝ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի որոշակի նորացման համար: Տարեկան կնորացվի գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի շուրջ 2%-ը, որը	Ծրագրի շրջանակներում տրամադրված գյուղ. տեխնիկայի քանակը և արժեքը (տարեկան շուրջ 2.8 մլրդ դրամ արժեքով մոտ 500 միավոր գյուղ. տեխնիկա)	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությու	2017-2026 թթ.	2017թ.-120.0, 2018թ.-270.0, 2109թ.-362.0, 2020թ-428.0	ՀՀ պետական բյուջե

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը (միջոցառման արդյունավետության ստուգման չափանիշը)	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը (մլն դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
իրականացում		կկազմի շուրջ 225 միավոր տրակտոր, 10 միավոր կոմբայն և շուրջ 275 միավոր այլ գյուղատնտեսական տեխնիկա:		ն			
4.Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, ինտենսիվ, 1-ից մինչև 10 հեկտար այգետնկումներ, 0.5-ից մինչև 5 հա հատապտղանոցների հիմնում կատարող տնտեսավարողներին տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում:	Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում, արդյունքում՝ ինտենսիվ այգիների տարածքների ընդլայնում, արտադրանքի մրցունակության բարձրացում, արտահանման ծավալների ավելացում:	Ծրագրի շրջանակներում հիմնված ինտենսիվ այգիների տարածք (տարեկան շուրջ 200 հա)	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018թ.	398.9	ՀՀ պետական բյուջե
5.Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Ագրովերամշակման ոլորտին կտրամադրվեն 1 տարի մարման ժամկետով և տարեկան մինչև 12 % տոկոսադրույքով վարկեր, որի 9 տոկոսային կետը կսուբսիդավորվի, վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման համար նախատեսվում է տարեկան 998.9 մլն դրամի տրամադրում	Կապահովվի գյուղատնտեսական մթերքների գնման դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների ժամանակին կատարումը, կբարձրանա գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի մրցունակության մակարդակը, որի արդյունքում կավելանան գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի արտադրության ու արտահանման ծավալները, կաճի հանրապետության մշակող արդյունաբերության արտադրանքի արտադրության ծա-	Տոկոսադրույքի սուբսիդավորմամբ տրամադրված վարկերի գումար (տարեկան շուրջ 18.0 մլրդ դրամ},	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017-2022 թթ.	2017թ.-70.4, Հետագա տարիներին՝ 998.9	ՀՀ պետական բյուջե

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը (միջոցառման արդյունավետության ստուգման չափանիշը)	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը (մլն դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
		վալում ագրովերամշակման արտադրության արտադրանքի մասնաբաժինը:					
6. Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման նպատակով կտրամադրվեն տոկոսադրույքի սուբսիդավորմամբ նպատակային վարկեր, որի պայմանները կհստակեցվի ՀՀ կառավարության կողմից ընդունվող ծրագրով	Պայմաններ կստեղծվեն հանրապետության գյուղատնտեսությունում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման և շահագործման համար, արդյունքում՝ շահառու տնտեսություններում կապահովվի ջրի հավասարաչափ բաշխում և ջրի տնտեսում շուրջ 40 %-ով, բերքատվության աճ, բարդ ռելիեֆ ունեցող հողատարածքների ոռոգման հնարավորություն, ոռոգման կազմակերպման աշխատանքային ծախսերի զգալի կրճատում: Ծրագրի իրականացումը կնպաստի նաև խախտված հողատեսքերի՝ գյուղատնտեսության մեջ ներգրավմանը:	Ծրագրի շրջանակներում կաթիլային ոռոգման համակարգեր ներդրված տարածքներ (տարեկան շուրջ 1600 հա)	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018-2022 թթ.	2018թ.-114.7, 2109թ.-313.3, 2020թ-425.2	ՀՀ պետական բյուջե
7. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրման համար մատչելի պայմաններով՝ 7 տարի մարման ժամկետով կտրամադրվեն տոկոսադրույքի սուբսիդավորմամբ նպատակային վարկեր տարեկան մինչև 14 % տոկոսադրույքով, վարկի տոկոսադրույքի մասնակի	Ծրագրի իրականացման արդյունքում՝ նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ խաղողի ու պտղատու այգիների և այլ տնտեսություն-ներում հակակարկտային ցանցերի ներդրման համար, հանրապետու-թյան այգիների շուրջ 2.0 %-ը կպատվի կարկտապաշտպան ցանցաշերտերով, հակակարկ-տային ցանցեր կիրառած տնտեսա-վարողների մոտ գրեթե կբացառվի կարկուտի ռիսկը, կբարձրանա ապահովագրության համար գրավ-չությունը, կբարելավվի բերքի	Ծրագրի շրջանակներում հակակարկտային ցանցերով պատված այգիների տարածք (տարեկան շուրջ 1350 հա)	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018-2022 թթ.	2018թ.-700.6, 2109թ.-1294.1, 2020թ-1780.5	ՀՀ պետական բյուջե

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը (միջոցառման արդյունավետության ստուգման չափանիշը)	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը (մլն դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
	սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկը տնտեսավարողին տրամադրվի 2 % տոկոսադրույքով:	որակը, կավելանա տնտեսավարողների եկամուտները, նախադրյալներ կստեղծվեն ընդլայնված ծավալներով ծրագրի իրականացման համար: Հակակարկտային ցանցերով պաշտպանված այգիներում կարկտահարությունից պաշտպանվածությունը կազմում է շուրջ 100 %:					
8.Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացում	Գերմանական զարգացման բանկի կողմից ներկայացված ծրագրային առաջարկի հիման վրա ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը ապահովելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացում առաջիկա տարիներին: Փորձնական ծրագիրը նպատակահարմար է իրականացնել բուսաբուծության ոլորտում, սկզբում ներառելով մեկ մարզ, կամ մարզի որոշ տարածաշրջաններ՝ առավել հաճախ հանդիպող կարկտահարության, ցրտահարության	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի մշակված մեխանիզմների փորձարկում, մեխանիզմների կատարելագործման համար նախադրյալների ստեղծում: Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման հիմնական ծրագրի իրականացման համար նախադրյալների ստեղծում:	Հանրապետության մեկ-երկու մարզում, կամ մարզի որոշ տարածաշրջաններում ներդրված գյուղատնտեսության ապահովագրական համակարգի գործող փորձնական ծրագրի առկայություն, տարեկան 885 միլիոն դրամ ապահովագրական վճարի սուբսիդավորում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2018-2020 թթ.	Տարեկան 885.0	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը (միջոցառման արդյունավետության ստուգման չափանիշը)	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը (մլն դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
	և երաշտի ռիսկերից: Ապահովագրական համակարգի փորձնական ծրագրի ներդրման գործում որպես պետության կողմից ցուցաբերվող աջակցության ձևաչափ նախատեսվում է կազմակերպչական աջակցություն և ապահովագրական վճարի մասնակի սուբսիդավորում:						